ԿՐԹԱԿԱՆ

ԲԵՐԻԿԱ ՇՈՒԿԱԿԻԶԵ. «ԿԵՆՏՐՈՆԸ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 137 ՄՈԴՈՒԼ»

Հարցազրույց Վրաստանի Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնի տնօրեն Բերիկա Շուկակիձեի հետ:

- Պարոն Բերիկա, ավագ սերունդն «Ուսուցչի տունը» հիշում է որպես կենտրոն, որտեղ միջոցառումներ, ֆիլմերի ցուցադրություններ, հանդիպումներ էին անցկացվում, սակայն աստիճանաբար ընդլայնվեցին նրա գործառույթները: «Ուսուցչի տան» մասին խոսելիս հատկապես ինչի՞ վրա կկենտրոնացնեք այսօրվա ընթերցողի ուշադրությունը:

- Մեր երկրի Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնի գործունեության շրջանակները, իհարկե, շատ ու շատ են ընդլայնվել, եւ այս պահին Կենտրոնն ունի մի շարք հիմնական գործառույթներ: Մեր առաջնահերթություններից է՝ ապագայում ներդրումներ կատարելը: Դա նշանակում է, որ պիտի աջակցենք դպրոցներում կրթական այնպիսի գործընթացի իրականացմանը, որը երեխային կպատրաստի ապագա կյանքին: Այս առումով կարեւոր է ուժեղացնել այսպես կոչված՝ STEM (բնագիտական, ճարտարագիտական առարկաներ, ՏՀՏ/համակարգչային գիտություններ, մաթեմատիկա, աշխարհագրություն) առարկաների ու տեխնոլոգիաների ուսուցումը, որը երեխային հնարավորություն կտա դպրոցում ստացած գիտելիքները հետագայում կիրառել ցանկացած մասնագիտության մեջ: Համապատասխանաբար, մենք հատուկ ուշադրություն ենք դարձնում ուսուցիչների համար այնպիսի դասընթացների անցկացմանը, որոնք նրանց կօգնեն աշակերտներին դաստիարակել որպես ինքնուրույն սովորողներ եւ հետազոտողներ:

Հատկանշական է, որ մեր հաստատությունը կենտրոնանում է ներառական կրթության վրա, այսօր մենք ակտիվ աշխատում ենք այդ ուղղությամբ, որը պայմանավորված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների թվի աճի միտումով:

Կարեւոր է, որ ուսուցիչների համար ավանդական վերապատրաստում անցկացնելուն զուգահեռ, աշխատում ենք վերապատրաստման տարբեր, ժամանակակից մոդուլների շուրջ, որոնք նրանց հնարավորություն կտան վերապատրաստման ընթացքում ստացած գիտելիքները կիրառել գործնականում: Մենք ստեղծում ենք նաեւ «Ուսուցչի էլեկտրոնային տուն» համացանցային կայքը (պորտալ), որտեղ թվային բոլոր ռեսուրսներն ու ծառայությունները կլինեն մեկ տիրույթում եւ հասանելի կլինեն ուսուցիչներին, աշակերտներին, ծնողներին, տնօրեններին:

Մեզ համար շատ կարեւոր է աջակցել ազգային փոքրամասնություններին: Այս ուղղությամբ Կենտրոնն ունի խորհրդատու-ուսուցիչներ եւ աջակցող-ուսուցիչներ: Ներկա փուլում աշխատում ենք վրացական բուհերում սովորող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին, որոնք սովորում են Վրաստանի տարբեր համալսարաններում, ներգրավել ուսուցչի մասնագիտության մեջ եւ աշխատանքի տեղավորել դպրոցներում:

- Ձեր ղեկավարած Կենտրոնի առաջնահերթություններից մեկը ուսանում-ուսուցման ժամանակակից մոտեցումների ներդրմանն ու տարածմանը նպաստելն է, այս տեսանկյունից ընթացիկ ուսումնական տարում նախատեսվող ակտիվություններից ո՞րը կառանձնացնեք:

- Կենտրոնի կողմից իրականացվող ծրագրերն ու միջոցառումներն ուղղված են ուսանում-ուսուցման գործընթացում ժամանակակից մոտեցումների ներդրմանը: Ներկայումս մենք ուսուցիչներին անվճար վերապատրաստման 137 մոդուլ ենք առաջարկում: Այս մոդուլներից յուրաքանչյուրը միտված է ուսանում-ուսուցման ժամանակակից մոտեցումների ներդրման եւ տարածման վրա:

- 2021-2022 ուսումնական տարում շարունակական մասնագիտական զարգացման առումով ի՞նչ առաջարկներ ունեք ուսուցիչների համար:

- Ինչպես արդեն նշվեց, մենք ուսուցիչներին առաջարկում ենք վերապատրաստման 137 մոդուլ: Մշակել ենք նաեւ վերապատրաստման 21 մոդուլային ծրագիր տնօրենների համար: Բացի այդ, կրթօջախների հավատարմագրման (ավտորիզացիա) գործընթացի մեկնարկից հետո, նրանց աջակցելու նպատակով, աշխատում ենք դպրոցական խորհրդատվական ծրագրի շուրջ:

Նշենք նաեւ, որ մոտ ապագայում, ուսուցիչների մասնագիտական զարգացմանը նպաստելու համար, կիրատարակենք երեք նոր ամսագրեր՝ STEM առարկաների, հումանիտար գիտությունների եւ գլոբալ քաղաքացիության ուղղությամբ: Ուսուցիչների համար այս ամսագրերում կտպագրվեն հետաքրքիր հոդվածներ, որոնք կօգնեն նրանց մասնագիտական առաջխաղացման գործում:

Մեր վերջնական նպատակն է՝ մասնագիտական գրականությունը հասանելի դարձնել բոլոր առարկաների ուսուցիչներին, ինչպես նաեւ տնօրեններին, ինչը կնպաստի ուսուցչի եւ տնօրենի մասնագիտությունների հեղինակության բարձրացմանը: Հենց այս նպատակին են ծառայում մեր ամսագրերը՝ «Դպրոցի կառավարում», «Ուսուցիչ» եւ այլն: Մասնագիտական գրականության մշակման գործում մենք առաջատար ենք, այս դիրքը կպահպանենք նաեւ ապագայում, եւ է՛լ ավելի կբարելավենք արդյունքները:

- Գիտենք, որ «Ուսուցչի տունը» համագործակցում է Հայաստանի Հանրապետության համապատասխան գերատեսչության հետ, խնդրում ենք ավելի կոնկրետ խոսել այդ մասին:

- Նոյեմբերին մեզ այցելեց հայաստանյան պատվիրակությունը՝ կրթության փոխնախարարի գլխավորությամբ: Նախատեսում ենք շատ հարցերի շուրջ տարբեր ուղղություններով համագործակցել: Ունենք հայալեզու ուսուցիչներ եւ միշտ կենտրոնանում ենք նրանց մասնագիտական առաջընթացի վրա:

Երկու կողմերն էլ համամիտ են, որ ազգությամբ հայ երեխաների համար վրացերենի ուսուցմանը զուգահեռ, հայոց լեզվի եւ գրականության իմացությունը շատ կարեւոր է: Ամեն ինչ անելու ենք հայոց լեզվի ուսուցիչներին աջակցելու համար: 2022 թվականի հոկտեմբերին մենք կայցելենք Երեւանի Աբովյանի մանկավարժական համալսարան, որտեղ կաշխատենք համապատասխան ամբիոնի հետ, որպեսզի հայալեզու ուսուցիչների հայոց լեզվի եւ գրականության վերապատրաստման մոդուլները լինեն բարձր մակարդակի եւ համապատասխանեցված՝ նրանց հետաքրքրություններին:

- Շնորհակալություն:

Հարցազրույցը վարեց ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

ՀԱՆՐԱՃԱՆԱՉ ՌՈԲԵՐՏ ԿՈՆԴԱԽՍԱԶՈՎԻ ՆԿԱՐՉԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ ԻՐ ՀԱՐԱԶԱՏ ՏԱՆԻՔԻ ՏԱԿ

Ապրիլի 20-ին Թբիլիսիի Հավլաբար թաղամասում, Սողոմոն Իմաստունի փողոցի թիվ 33 տանը բացվեց հանրաճանաչ նկարիչ Ռոբերտ Կոնդախսազովի (1937-2010թթ.) նկարների երկօրյա ցուցահանդեսը:

Ներկայացվող գրեթե բոլոր ցուցանմուշները հավաքվել էին Թբիլիսիի մասնավոր հավաքածուներից: Այս առիթով Ռոբերտ Կոնդախսազովի արվեստի երկրպագուները նկարչի աշխատանքներն իր հարազատ տանիքի տակ տեսնելու եւս մեկ հնարավորություն ունեցան:

Թբիլիսիի Հավլաբար թաղամասի Սողոմոն Իմաստունի փողոցի 33 համարի կոլորիտային հինավուրց տունը 19-րդ դարից ի վեր թբիլիսցի մեծահարուստ Կոնդախսազովների սեփականությունն է եղել: Շուրջ 150 տարի այս տանը ապրել են Կոնդախսազով տոհմի ներկայացուցիչները: Վերջինը աշխարհում հանրաճանաչ նկարիչ Ռոբերտ Կոնդախսազովն էր, ով 2005 թվականին տեղափոխվեց Մոսկվա, որտեղ եւ մահացավ 2010 թվականին, 73 տարեկան հասակում: Անհատ սեփականատիրոջ վաճառված տունը ավելի ուշ ձեռք բերվեց Վրաստանի Ազգային ֆոնդի կողմից: Ներկայումս այստեղ Վրաստանի ազգային ֆոնդի գլխավոր գրասենյակն է տեղակայված:

Վրաստանի մշակութային ժառանգության հուշարձանի կարգավիճակ ստացած տունը վերականգնվել ու վերանորոգվել է Թբիլիսիի պատմական հատվածում իրականացվող «Մշակութային ժառանգության կենսունակ վերականգնում» պիլոտային ծրագրով, ICOMOS Վրաստանի բաժանմունքի եւ Նորվեգիայի մշակութային ժառանգության գործակալության համագործակցության շրջանակներում՝ Նորվեգիայի արտաքին գործերի նախարարության ֆինանսավորմամբ: Ծրագրի նպատակը մշակութային ժառանգության վերականգնման ճանապարհով Վրաստանում կայուն զարգացման գործընթացին օժանդակելն է:

Թբիլիսիի արժանավոր զավակի՝ մեծ նկարիչ Ռոբերտ Կոնդախսազովի երկօրյա ցուցահանդեսը հնամենի տան պատմության մերօրյա շարունակությունն է: Նախաձեռնության հեղինակների եւ հյուրերի գլխավոր մաղթանքը այս տանը նորանոր նման միջոցառումներ տեսնելն է: Նման միջոցառումներն են, որ կենդանի են պահում եւ հարստացնում Թբիլիսիի կոլորիտային գունապնակը:

ՍԵՂԱ ԱԲՈՎՅԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ ԴԻՄՈՐԴԻ ՀԱՄԱՐ. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ՝ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԳՐԱՆՑՎԵԼՈՒՑ ՀԵՏՈ

Վրաստանի քննությունների գնահատման ազգային կենտրոնի (NAEC) հայտարարությամբ, Վրաստանում 2022 թվականի ամռանը միասնական ազգային քննություններն այս տարի եւս կանցկացվեն մի քանի քննակետերում, ընդ որում դիմորդները պետք է հաշվի առնեն մի քանի նախազգուշացում՝ կապված քննության ընթացակարգի հետ, տրվում է նաեւ դիմորդի ուղեցույցը:

Քննություններն այս տարի եւս մասամբ էլեկտրոնային կերպով կանցկացվեն՝ քննական նյութը կլինի էլեկտրոնային տարբերակով, իսկ պատասխանները կնշվեն թղթի վրա:

Ի՞նչ ընթացակարգեր է անցնում դիմորդը քննական կենտրոնում գրանցվելուց հետո.

* Դիմորդը ժամանակին ներկայանում է այն քննական կենտրոն, որտեղ գրանցվել է:

* Հանձնում է լրացուցիչ իրերը գրանցումից առաջ:

* Գրանցվելուց հետո զբաղեցնում է նախատեսված տեղը:

* Ստանում է աշխատանքային թերթիկ եւ սեւագրության թերթիկներ, նաեւ՝ օժանդակ նյութ (կախված առարկայից, օրինակ՝ քարտեզ, Մենդելեեւի աղյուսակ եւ այլն:

* Դիմորդը, ցանկության դեպքում, կարող է օգտագործել սեփական գրիչը, եթե դա համապատասխանում է պահանջներին, այնուամենայնիվ գրիչը նրան տրվում է Քննությունների եւ գնահատման ազգային կենտրոնի կողմից:

* Պատասխանների թերթիկի վրա անհատական շտրիխ կոդ է փակցվում անանունությունը ապահովելու համար:

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել պատասխանների թերթիկին, այն չի կարելի ծալել, ճմրթել կամ վնասել:

Ստուգվում է միայն պատասխանների թերթիկը: Բոլոր քննական կենտրոններում եւ գրանցման տարածքներում տեղադրվում է տեսախցիկ, ձայնագրվում քննության ողջ ընթացքը եւ ստեղծվում տեսաարխիվ:

Դիմորդի կողմից քննության ժամկետը լրանալու կամ աշխատանքը վաղաժամկետ ավարտելու դեպքում դիտորդը ստուգում է, թե, արդյոք, դիմորդի պատասխանների թերթիկը եւ շտրիխ կոդը վնասված չեն, որից հետո՝ ընդունում քննաթերթիկը:

Քննական գործընթացն այսպիսով ավարտվում է: Պատասխանների թերթիկները կնքվում են եւ ուղարկվում Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոն:

COVID - 19

ԶՈՒՐԱԲ ԱԶԱՐԱՇՎԻԼԻ. «ՄԱՅԻՍԻՆ ԿՍԿՍՎԻ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԱՐՇԱՎԸ»

ԾՐԱԳՐՎՈՒՄ Է ՊԱՏՎԱՍՏԵԼ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ 70 ՏՈԿՈՍԸ

Վրաստանի առողջապահության նախարար Զուրաբ Ազարաշվիլու խոսքով՝ գերատեսչությունը պատվաստումների չորրորդ չափաբաժնի վերաբերյալ դեռ հանձնարարական չի ստացել Իմունիզացիայի խորհրդի կողմից:

- Արդեն մեկ ամսից ավելի է՝ երկրում նկատվում է համավարակային իրավիճակի զգալի կայունացում: Մի քանի շաբաթ է, ինչ վարակվածների թիվը նվազել է, իսկ մահերի թիվը կտրուկ կրճատվել: Իմունիզացիայի խորհուրդը պարբերաբար ուսումնասիրում է տարբեր երկրների օրինակներ, այդ թվում՝ վիրուսի ընթացքը: Եթե խորհրդի կողմից առաջարկություն լինի, ուրեմն, այդ հարցը կբարձրացնենք նախարարության մակարդակի ու կհամաձայնվենք: Մենք դեռ նման հանձնարարական չունենք,- ասաց Զուրաբ Ազարաշվիլին՝ հավելելով, որ հաջորդ ամսից կսկսվի պատվաստումների արշավը, որի նպատակը՝ մինչեւ տարեվերջ ընդգրկել բնակչության 70 տոկոսը:

- Մենք պատրաստում ենք հաղորդակցման արշավ: Պատվաստումների ծրագրի համաձայն՝ մինչեւ տարեվերջ նախատեսվում է բնակչության պատվաստումների 70 տոկոսը: Մենք կսկսենք հաղորդակցման արշավը, եւ այն կսկսենք հաջորդ ամսին,- նշեց Զուրաբ Ազարաշվիլին:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱԶԱՆՑԵՑ 507 ՄԻԼԻՈՆԸ

COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում հասել է 507 922 454-ի: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 6 236 694-ը: Ապաքինվել է 460 316 003 մարդ:

Վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում **ԱՄՆ**-ն է, որտեղ հաստատվել է **82 553 058** դեպք: Այստեղ մահացածների թիվը **1 017 609** է, երկրորդ տեղում **Հնդկաստանն** է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **43 052 425**ի, մահացածներինը՝ **522 116**-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Բրազիլիան** է: Այստեղ վարակվել է **30 330 629**, մահացել՝ **662 556** մարդ: **Ֆրանսիայում** կորոնավիրուսով վարակվել է **28 076 017**, վարակի հետեւանքով մահացել՝ **144 799**մարդ: Ֆրանսիային հաջորդում են Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը, Հ.Կորեան, Իտալիան ու Թուրքիան:

Հայաստանում, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **422 814**-ի, մահացածներինը՝ **8 622**-ի, ապաքինվածներինը՝ **410 535**-ի:

Ադրբեջանում վարակվածների թիվը **792 445** է: Վարակից մահացել է **9 707,** ապաքինվել՝ **782 603** մարդ:

Վրաստանում, ապրիլի 22-ի դրությամբ, ողջ համավարակի ընթացքում վարակվել է **1 654 076,** մահացել՝ **16 795,** ապաքինվել՝ **1 635 291** մարդ:

*Ապրիլի 22-ին, կորոնավիրուսով վարակման **161** նոր դեպքերից **86-ը Թբիլիսիում է, Աջարիայում՝ 9, Իմերեթիում՝ 20, Քվեմո Քարթլիում՝ 9, Շիդա Քարթլիում՝ 7, Գուրիայում՝ 8, Սամեգրելո-Զեմո Սվանեթիում՝ 4, Կախեթիում՝ 13, Մցխեթա-Մթիանեթիում՝ 1, Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիում՝ 1, Սամցխե-Ջավախեթիում՝ 3:***

Ապրիլի 22-ի տվյալներով մահացել է 1 մարդ:

Խորագիրը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ԿԱՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ. «ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԿԱՅԱՑԱԾ ԲԺԻՇԿ ՀԱՎԵՐԺ ՈՒՍԱՆՈՂ Է...»

Մեր զրուցակիցը Թբիլիսիի բժշկական համալսարանի առաջին համալսարանական կլինիկայի առաջատար բժիշկ-էնդոկրինոլոգ Կարեն Գրիգորյանն է: Համավարակի թեժ օրերին, «Վրաստանի» ընթերցողին հաճախ ենք ներկայացրել նրա մասնագիտական մեկնաբանությունն իրավիճակի վերաբերյալ, սակայն երբեք չենք անդրադարձել նրա կենսագրական մանրամասներին: Հանրության հետ անընդհատ կապի մեջ, իրեն դիմող յուրաքանչյուրի համար հասանելի բժիշկը, մշտապես խուսափում է իր անվան հանրայնացումից: Կարենը չկա նաեւ սոցիալական ցանցերում, հետեւաբար՝ իր հասցեին հնչող երախտագիտական խոսքերը, որոնք ապաքինվածները հրապարակում են իրենց ֆեյսբուքյան էջերում, Կարենը չի տեսնում:

Երբ ինքս եմ հայտնում այդ մասին ու նկատում, որ բուժառուները հաճախ ոչ մի կապ չունեն էնդոկրինային հիվանդության հետ, ժպտում է եւ հարցերիս պատասխանում իրեն հատուկ համեստությամբ:

- *Երեւի թե մարդկանց պարզապես սիրել է պետք,*- ասում է Կարենը: *Երբ բուժառուին ապաքինում ես, հոգ տանում նրա մասին, նա քեզ համար հարազատ է դառնում ու դու սկսում ես անհանգստանալ նրա համար՝ 24 ժամ անդադար:*

Կարենին մեր համայնքում փոքրուց գիտեն: Նա Թբիլիսիի օրինակելի ընտանիքներից մեկի զավակն է. հայրը Խաչատուր Գրիգորյանն է, մայրը՝ Սուսաննա Խաչատրյանը, Վրաստանի հայ համայնքի ակտիվ կանանցից մեկը, ով հանրությանը հայտնի է դեռ Վրաստանի ռադիոյի, ապա Առաջին Ալիքի հայկական հաղորդումների խմբագրություններից՝ որպես լրագրող եւ խմբագիր, ապա՝ որպես Վրաստանի հայ կանանց «Շուշանիկ» միության հիմնադիր-նախագահ, իսկ այսօր՝ Վիրահայոց թեմի մանկ ծառայության ղեկավար, քույրը՝ Ալիսան, տնտեսագետ է, երեք զավակների մայր: Ընտանիքում բժիշկներ չկան, Կարենն առաջինն է, ով ընտրել է բժշկի մասնագիտությունը, իսկ ծնողներն ամեն կերպ աջակցել են որդու որոշմանը:

- *Իններորդ դասարանում էի,*- պատմում է Կարենը,- *երբ սկսեցի հետաքրքրվել կենսաբանությամբ: Այդ ընթացքում հարեւանի տղան լուրջ վնասեց ոտքը եւ սկսեց արնահոսել, փորձեցի առաջին օգնությունը ցուցաբերել, նախքան կհասներ «Շտապ օգնության» մեքենան: Պարզվեց՝ ամեն ինչ ճիշտ էի արել...*

Ընտրածս ճյուղը՝ էնդոկրինոլոգիան, շատ հետաքրքիր ուղղություն է բժշկության մեջ: Այն ընդգրկում է մարդու գրեթե բոլոր օրգանները եւ, որն ամենակարեւորն է՝ մտածելու, վերլուծելու հնարավորություն է տալիս: Էնդոկրինոլոգիայի հիմքում նյութափոխանակությունն է, որի արդյունքում հորմոններն արտադրվում են ներքին սեկրեցիայի միջոցով եւ աջակցում օրգանիզմի նորմալ աշխատանքին: Բացի այդ, էնդոկրինոլոգիան ներառում է տասնհինգ կենսականորեն կարեւոր հիվանդություններ՝ շաքարախտ, գիրացում, վահանագեղձային հիվանդություններ, օստեոպորոզ (կմախքային ախտահարում) անպտղություն, տղամարդու առողջություն, զարկերակային հիպերտենզիա եւ այլն:

Բժիշկը պարզաբանում է, որ հիվանդությունն այժմ երիտասարդացել է ոչ միայն էկոլոգիական ոչ նպաստավոր միջավայրով, այլեւ նստակյաց ու սթրեսներով լի առօրյայով պայմանավորված: Ասում է, որ նախնական շրջանում ախտանշանները խաբուսիկ են, որոնց պարտադիր ուշադրություն է հարկավոր:

- *Էնդոկրինոհիվանդները բողոքում են ընդհանուր թուլությունից, քրոնիկ հոգնածությունից, մաշկի չորությունից, մազաթափությունից, բերանի չորությունից, կշռի կտրուկ կորստից: Լինում է նաեւ այնպես, երբ հիվանդությունը գաղտնի է, եւ ախտորոշումը հնարավոր է միայն կլինիկական հետազոտությունների ճանապարհով: Ես կտրականապես դեմ եմ ինքնաբուժմանը, քանի որ հետեւանքները կարող են վատթարագույնը լինել: Մենք գործ ունենք օրգանիզմի համար կենսականորեն կարեւոր հորմոնների հետ, որոնց սխալ գործունեությունն օրգանիզմում ողբերգական հետեւանքներ կարող է ունենալ:*

Այս ամենի մեջ հմտանալու համար, Կարենին պահանջվեց գրեթե տասնչորս տարի՝ 17-ից 31 տարեկան: Ու հետո ուսման նոր շրջան սկսեց: 35-ամյա մասնագետը գտնում է, որ «հավերժ ուսանողը» կենսակերպ է յուրաքանչյուր բժշկի համար, ով պետք է անընդհատ սովորի, ընթերցի, մասնակցի կոնֆերանսների, ունկնդրի վեբինարներ, քանի որ շատ դժվար է վերադառնալ բժշկություն, եթե նույնիսկ մեկ տարի այդ բնագավառում չես գործել:

Կարենն իր բուհական կրթությունը սկսել է Թբիլիսիի պետական բժշկական համալսարանում, օրդինատուրան եւ ասպիրանտուրան ավարտել է Սանկտ Պետերբուրգի Ի.Մեչնիկովի անվան պետական բժշկական համալսարանի էնդոկրինոլոգիայի ամբիոնում: Այնուհետեւ պաշտպանել թեկնածուական՝ Սանկտ Պետերբուրգի ազգային հետազոտական կենտրոնում: Այնուհետեւ վերադարձել է հարազատ ծննդավայր՝ Թբիլիսի, եւ արդեն այստեղ պաշտպանել եւ ստացել բժշկական գիտությունների դոկտորի կոչում:

- *Սանկտ Պետերբուրգում զգացի, թե որքան եմ կապված ծննդավայրիս հետ: Կարոտը ստիպեց այդ քաղաքում համերկրացիներ փնտրել: Հանրակացարանում մեր փոքրիկ Թբիլիսին ունեինք, բոլորս թբիլիսցի էինք՝ անկախ ազգությունից: Միշտ համարել եմ, որ այս ջերմ ու բազմազգ քաղաքում է միայն հնարավոր ձեռք բերել բազմաթիվ մարդկային որակներ՝ բարություն, կարեկցանք, պատրաստակամություն: Այնպես որ, երբեք չեմ զղջացել ծննդավայր վերադարձիս համար: Եվ մանավանդ, որ այսօր աշխատանքս Թբիլիսիի առաջին համալսարանական հիվանդանոցում է: Ըստ էության, սա այն բուհի բազան է, ուր առաջին անգամ եմ առնչվել իրական բժշկությանը, որտեղ ինձ մշտապես ջերմ ու լավ են վերաբերվել, աջակցել ու գիտելիքներով զինել:*

Բժիշկ-էնդոկրինոլոգի աշխատանքային սկիզբը համընկավ Կովիդ-19-ի հայտարարման հետ, ուստի պատասխանատվությունն առավել սրվեց ու խոցելի դարձավ: Միլիոնավոր մարդկանց կյանք խլած հիվանդության դեմ անզոր էին նույնիսկ աշխարհի թիվ մեկ վարակաբանները, ուստի պայքարում լծված էին բոլոր բժիշկները, իսկ Թբիլիսիի համալսարանական հիվանդանոցը Վրաստանի կիզակետն էր, քանի որ հենց այստեղ էին տեղափոխում մահի ճիրաններում գտնվող ամենածանր հիվանդներին:

- *Որպես էնդոկրինոլոգ իմ պարտականությունը արյան մեջ շաքարի մակարդակի կարգավորումն էր, որը բավական բարդ էր՝ պայմանավորված հիվանդության անկանխատեսելի ընթացքով: Հիվանդների մեջ շատ էին իմ շրջապատի մարդիկ: Ու դա առավել էր ծանրացնում հոգեվիճակս, թեեւ փորձում էի երբեք ցույց չտալ, նույնիսկ այն ժամանակ, երբ ինքս էի վարակվել ու բավական ծանր էի տանում: Ցավոտ էր հատկապես, երբ բուժառուներն իմ մանկավարժներն էին, դասախոսները, ովքեր, փաստորեն, նպաստել էին բժշկիս կայացմանը:*

Ծանր հիշողություններ են... Տասնյակներով մարդկային կորուստ էինք գրանցում մեկ օրվա ընթացքում՝ ահել ու ջահել, քրոնիկ ու բացարձակապես առողջ, հղի ու մանուկ, սարսափելի էր...:

Այսօր, ինչ խոսք, հիվանդների թիվն աշխարհում եւ, իհարկե, մեր պետության ողջ տարածքում, հետեւաբար մեր կլինիկայում եւս նշանակալիորեն նվազել է, բայց կորոնավիրուսը վերջնականորեն հաղթահարված չէ եւ չի բացառվում նրա նոր շտամների ծագումը: Գործընկերներիս նման ես նույնպես հորդորում եմ պատվաստվել հատկապես քրոնիկ հիվանդություն ունեցող մարդկանց:

Կարենը փաստում է, որ համավարակը շատ բան սովորեցրեց հենց իրենց՝ բժիշկներին: Շատերին վերադարձրեց Հիպոկրատի երդմանը, միախառնեց գիտությունն ու աստվածայինը, քանի որ հաճախ էին նաեւ հրաշքները, երբ մահի աչքերին նայող հիվանդը նորից կյանք էր վերադառնում ու բժշկին նույնպես կյանք վերադարձնում:

- *Երջանիկ պատահականություն էր նմանների փրկությունը: Մի այդպիսի պապիկ կար, հայ-վրացական միմինոյական բարեկամության օրինակով ապրող: Դեռ պալատում, ապա տանից զանգում ու ավանդական «ալլո»-ի փոխարեն ասում էր՝ պրոֆեսոր Խաչիկյա՞ն, ո՞նց ես:*

...Ասում են, ապաքինման ճանապարհին հիվանդին հետազոտելով, բժիշկն ինքն է «հետազոտվում»: Այստեղից էլ ձեւավորվում է նրա բարի կամ «ոչ բարի» համբավը: Բարիի դեպքում միանում են մարդկայինն ու մասնագիտականը, իսկ հակառակը՝ սովորաբար պայմանավորվում է այդ որակներից մեկի բացակայությամբ: Բարեբախտաբար, մեր Կարենն ունի ե'ւ մեկը, ե'ւ մյուսը: Ու եթե առաջինը բնածին է, ապա երկրորդը՝ ձեռքբերովի ու շարունակական, քանի որ 12 բժշկական թեմաներով հրապարակումների, այդ թվում՝ 8 հոդվածների հեղինակ, բժշկական գիտությունների դոկտոր Կարեն Գրիգորյանը, չի դադարեցնում աշխատանքը մասնագիտական աճի ուղղությամբ: Կարենը կրկին չի հանրայնացնում մոտ ժամանակներում սպասվող լավ նորությունները, թեեւ խոստանում է, որ շոշափելի արդյունք գրանցելու դեպքում առաջինը «Վրաստանն» է իմանալու:

ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆ - ՌՈՒՍԱՍՏԱՆ. ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՑ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Ապրիլի 18-19-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը երկօրյա պաշտոնական այցով գտնվում էր Ռուսաստանում:

Այցի շրջանակներում՝ Հայաստանի ղեկավարը հանդիպումներ ունեցավ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի, Ռուսաստանի վարչապետ Միխայիլ Միշուստինի, Ռուսաստանի Պետական Դումայի նախագահ Վյաչեսլավ Վոլոդինի, ՌԴ Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոյի հետ:

Հայաստանի վարչապետի եւ Ռուսաստանի նախագահի հանդիպմանը քննարկվեցին հայ-ռուսական ռազմավարական եւ դաշնակցային հարաբերությունների հետագա զարգացմանը վերաբերող օրակարգային հարցեր: Անդրադարձ եղավ Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների՝ 2020 թվականի նոյեմբերի 9-ի, 2021 թվականի հունվարի 11-ի եւ նոյեմբերի 26-ի եռակողմ հայտարարությունների կատարման ընթացքին:

Ռուսաստանի նախագահն ընդունեց այս տարվա երկրորդ կեսին «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության» գագաթաժողովում Երեւան այցելելու Հայաստանի վարչապետի հրավերը:

Հայաստանի վարչապետի՝ Մոսկվա կատարած պաշտոնական այցի շրջանակներում՝ Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ ստորագրվեց էներգետիկ համագործակցության ծրագիր:

Ստորագրվեց նաեւ սոցիալ-տնտեսական, մշակութային եւ այլ ոլորտներում համագործակցության խորացման եւս հինգ փաստաթուղթ:

Հանդիպման ավարտից հետո Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը եւ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը համատեղ հայտարարությամբ ամփոփեցին Հայաստանի վարչապետի պաշտոնական այցի արդյունքները:

Ռուսաստան պաշտոնական այցի շրջանակներում՝ Հայաստանի վարչապետն այցելեց նաեւ Նիժնի Նովգորոդ:

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ , ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆԸ, ՎԵՑ ԱՄՍՈՎ ԱՁԱՏՎՈՒՄ ԵՆ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԻՑ

Եվրասիական տնտեսական հանձնաժողովը, ԵԱՏՄ անդամ պետությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա, ընդունել է մի շարք որոշումներ:

Համաձայն նշված որոշումների՝ ներմուծման մաքսատուրքի վճարումից վեց ամիս ժամկետով ազատվում են ԵԱՏՄ անդամ պետությունների տնտեսությունների համար կարեւորագույն նշանակություն ունեցող որոշ ապրանքներ:

Նշված որոշումներն ուղղված են ԵԱՏՄ անդամ պետությունների տնտեսական կայունացման եւ պարենային անվտանգության ապահովման արդի խնդիրների հաղթահարմանը, ինչպես նաեւ միջազգային շուկաներում նոր մատակարարների բացահայտմանը:

Ընդունված որոշումները նախեւառաջ ուղղված են բնակչության պարենի ապահովվածությանը եւ գնաճի զսպմանը: Արտոնություն են ստացել տնտեսության հետեւյալ կարեւոր ճյուղերը՝ դեղագործություն, սննդամթերքի արտադրություն, մեքենաշինություն, շինարարություն, ոսկերչություն, թեթեւ արդյունաբերություն, լեռնահանքային արդյունաբերություն եւ արդյունաբերության մի շարք այլ ճյուղեր:

ԴԻՄՈՐԴՆԵՐԸ ԿԿԱՐՈՂԱՆԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՁՆԵԼ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

2022 թվականի դեկտեմբերից դիմորդներին տրվելու է միասնական քննություններ հանձնելու երկրորդ հնարավորությունը:

Ընդունելության կարգի հիմնական փոփոխություններից մեկը դիմորդին երկրորդ անգամ միասնական քննություն հանձնելու հնարավորությունն է: Երկրորդ անգամ քննություն կարող են հանձնել նաեւ այն դիմորդները, որոնք թեեւ ստացել են բավարար միավոր բուհ ընդունվելու համար, սակայն ցանկանում են իրենց ուժերը կրկին փորձել՝ առավել բարձր միավորներ հավաքելու համար:

Մրցույթը ինչպես միշտ, լինելու է մեկ անգամ, ամռան ընթացքում՝ հունիսին դիմորդները հանձնելու են ընդունելության քննություններ, իսկ մինչեւ հուլիսի 15-ը կամփոփվեն ընդունելության քննությունների արդյունքները:

Կարգում էական այլ փոփոխություններ չեն եղել: Միակ փոփոխությունը կապված է ընդունելության քննության տեսակների հետ: Նախկին քննությունները միասնական, ներբուհական եւ կենտրոնացված էին, նոր կարգավորմամբ ընդունելության քննությունները միասնական եւ ներբուհական են:

ՊԱՏՎԱՍՏՈՒՄԸ՝ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՆՈՐ ԱԼԻՔԻ ԿԱՆԽՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ

Ապրիլի 19-ին, Հայաստանի փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանի նախագահությամբ եւ շահագրգիռ պետական մարմինների ղեկավար կազմի ու պատգամավորների մասնակցությամբ, անցկացվեց Հայաստանում կորոնավիրուսի տարածումը կանխարգելող աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի հերթական նիստը:

Նիստում առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը ներկայացրեց Երեւանում եւ մարզերում կորոնավիրուսային հիվանդության ներկա համաճարակային իրավիճակը, հիվանդության դեմ պատվաստումների գործընթացը եւ ընդգծեց, թեեւ վերջին շրջանի արդյունքներով դրական դինամիկա է արձանագրվում, այդուհանդերձ, ժամանակը պետք է օգտագործել եւ շարունակել պատվաստման գործընթացը՝ նոր ալիքի բռնկման դեպքում մահացության բարձր ցուցանիշներից զերծ մնալու համար:

Նիստում, ի թիվս այլ հարցերի, անդրադարձ կատարվեց նաեւ նախորդ նիստի ընթացքում փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանի կողմից տրված հանձնարարականների կատարման ընթացքին:

ԱՌԱՋԸՆԹԱՑ՝ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

«Freedom House»-ը հրապարակել է իր «Nations in Transit 2022» տարեկան զեկույցը, որում անդրադարձ կա նաեւ Հայաստանին:

Իրավապաշտպան կազմակերպության զեկույցում նշվում է, որ 2004 թվականից սկսած նախկինում ավտորիտար երեք երկրներ՝ Մոլդովան, Կոսովոն եւ Հայաստանը, քայլեր են ձեռնարկել ժողովրդավարության ամրապնդման ուղղությամբ, որի արդյունքում դարձել են հիբրիդային ռեժիմներ:

Հայաստանը, ըստ Freedom House-ի զեկույցի, ընդհանուր ցուցանիշով առաջընթաց է գրանցել՝ հնարավոր առավելագույն 7 միավորից, որն առավել ժողովրդավար երկրի ցուցանիշն է, ստանալով 3,04 միավոր՝ նախորդ տարվա 2,96 միավորի փոխարեն: Հայաստանն առաջընթաց է գրանցել զեկույցի կողմից հետազոտվող մի քանի ոլորտներում, ներառյալ ժողովրդավարական կառավարումը, ընտրական գործընթացը եւ դատաիրավական համակարգի զարգացումն ու անկախությունը՝ միաժամանակ նահանջելով անկախ մամուլի ցուցանիշում:

Հայաստանը, ըստ զեկույցի, հետխորհրդային երկրներից զիջում է միայն Ուկրաինային, Վրաստանին ու Մոլդովային՝ իր հետեւում թողնելով Կենտրոնական Ասիայի հանրապետությունները, Բելառուսը, Ռուսաստանն ու Ադրբեջանը:

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ապրիլի 17-ին, Հայաստանի ազգային հերոս, պետական քաղաքական գործիչ Կարեն Դեմիրճյանի 90-ամյակի կապակցությամբ, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի ուղեկցությամբ, այցելեց Կոմիտասի անվան պանթեոն եւ հարգանքի տուրք մատուցեց Կարեն Դեմիրճյանի հիշատակին:

Կարեն Դեմիրճյանի շիրմաքարին ծաղկեպսակ դրվեց նաեւ Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանի անունից:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ՝ ՀԱՏՈՒԿ ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆՈՎ

Հայկական արտադրանքը խթանելու եւ հանրությանը ներկայացնելու համար էկոնոմիկայի նախարարությունը մի շարք առեւտրի կետերում եւ հայկական արտադրության հագուստի խանութներում իրականացնում է իրազեկման արշավ՝ բոլոր հայկական արտադրանքների դիմաց փակցնելով նոր դիզայներական տարբերանշաններ:

Հայաստանի էկոնոմիկայի նախարարությունը 2021 թվականին մեկնարկել էր «Made in Armenia» նախագիծը, որի նպատակն է՝ հանրությանը իրազեկել հայկական արտադրության մասին եւ բարձրացնել հայկական արտադրանքի վարկանիշը՝ ներկայացնելով բոլոր որակյալ եւ նորարար արտադրանքները:

Նախագծի գլխավոր նպատակը՝ ստեղծել մեկ հարթակ, որի միջոցով սպառողներն ու արտադրողները կարող են կապ հաստատել միմյանց հետ եւ տեղեկանալ ամենաթարմ հայկական արտադրանքների, ինչպես նաեւ ծառայությունների մասին:

«ՈՍԿԵ ԾԻՐԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆԸ՝ ՀՈՒԼԻՍԻ 10-17-Ը

Երեւանի «Ոսկե ծիրան» 19-րդ միջազգային կինոփառատոնը 2022-ին տեղի կունենա հուլիսի 10-17-ը: Միջազգային կինոփառատոնը հանրությանը կներկայացնի մրցութային կինոնկարներ աշխարհի տարբեր երկրներից, ինչպես նաեւ՝ ֆիլմեր ամենահեղինակավոր կինոփառատոներից: Հայտարարվել է նաեւ փառատոնի արտադրական հարթակի՝ GAIFF Pro հավատարմագրման բացման մասին:

GAIFF Pro-ն սկսում է C2C նախագծերի եւ աշխատանքային փուլում գտնվող ֆիլմերի հայտերի ընդունումը: C2C շուկան այս տարի տեղի կունենա հուլիսի 11-15-ը:

Որպես GAIFF Pro-ի բաղադրիչ՝ C2C տարածաշրջանային համատեղ արտադրության շուկան Արեւմտյան Ասիայի տարածաշրջանի կինոռեժիսորների համար նախատեսված միջազգային հարթակ է, որը հնարավորություն է տալիս զարգացնել ռեժիսորի առաջին կամ երկրորդ ֆիլմի նախագիծը, ինչպես նաեւ այն ներկայացնել կինոոլորտի միջազգային մասնագետներին՝ խթանելով եւ հաստատելով համագործակցություն երկրների միջեւ:

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ - 182

ԲՈԼՆԻՍ-ԽԱՉԵՆՈՒՄ ԱՂԱՅԱՆԱԿԱՆ ՕՐԸ ԿԱՆՑԿԱՑՎԻ ՄԱՅԻՍԻ 1-ԻՆ



Մայիսի 1-ին, ժամը՝ 12:00-ին հրավիրում ենք մասնակցելու մեծ գրող, մանկագիր, մանկավարժ, հասարակական գործիչ եւ թումանյանական «Վերնատուն» գրական խմբակի համահիմնադիր Ղազարոս Աղայանի (1840-1911թթ.) մեծարումը խորհրդանշող ժողովրդական տոնախմբության: Ավանդույթի համաձայն, Աղայանական օրը կկայանա գրողի ծննդավայրում, Բոլնիսիի մունիցիպալիտետի Բոլնիս-Խաչեն գյուղում:

Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միություն

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՈՒՂԵՎՃԱՐԸ՝ ՑԱՆԿԱՑԱԾ ԲԱՆԿԱՅԻՆ ՔԱՐՏՈՎ

Թբիլիսիի սակրեբուլոյի որոշմամբ, մայիսից մայրաքաղաքի հասարակական տրանսպորտում ուղեվճարը հնարավոր կլինի ցանկացած բանկային քարտով:

Հատկանշական է, ըստ նոր կանոնի ցանկացած բանկ կարող է իր հաճախորդներին առաջարկել սեփական քարտով միանվագ վճարման հնարավորությունը, սեփական քարտով ակտիվացնել քաղաքապետարանի կողմից մշակված բաժանորդագրությունները:

Արտոնյալ քարտերի համակարգը փոխվում է միայն թոշակառուների համար: Այն դեպքում, երբ թոշակառուների սպասարկման բանկը, այս դեպքում՝ Liberty Bank-ը որոշի արտոնյալ ծառայություն առաջարկել, ապա Bank of Georgia-ն չի սահմանափակի այն:

Նշենք, որ վերոնշյալ օրենքը չի տարածվի սոցիալական այլ խմբերի վրա՝ ներառյալ ուսուցիչները, ուսանողները եւ այլն: Նրանց անպայման պետք կգան Bank of Georgia-ի կամ պետական գործակալության կողմից պատրաստված քարտերը:

Հիշեցնենք, որ առայժմ ուղեվճարը հնարավոր է միայն Bank of Georgia-ի, TBC Bank-ի եւ Metroman քարտերով:

ԲՈՆՑՔԱՄԱՐՏ

ԱԽԱԼՔԱԼԱՔՑԻ ԳՈՌ ԱՅՎԱԶՅԱՆԸ՝ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՉԵՄՊԻՈՆ. ԿԵՑՑԵ'Ս, ԳՈՌ ՋԱՆ

Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում եզրագիծը հատեց բռնցքամարտի Եվրոպայի երիտասարդական առաջնությունը: Մրցաշարին մասնակից 42 երկրների թվում էր նաեւ Վրաստանի հավաքականը, որի կազմում էր 17-ամյա Ախալքալաքիի մարզահամալիրի սան Գոռ Այվազյանը, որը նվաճեց Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը:

Ապրիլի 22, Թբիլիսիի օդանավակայան
Ձախից՝ Գագիկ էլիզբարյանը, Եվրոպայի չեմպիոն Գոռ Այվազյանը եւ Ատոմ էլիզբարյանը

Առաջնության ընթացքում բավական ակտիվ հանդես եկան Վրաստանի բռնցքամարտիկները, եւ ընդհանուր առմամբ՝ իրենց ակտիվում գրանցեցին երկու ոսկե, մեկ արծաթե եւ երեք բրոնզե մեդալներ:

Գոռ Այվազյանը Վրաստանի վաստակավոր մարզիչ, 37-ամյա Գագիկ էլիզբարյանի (Վրաստանի վաստակավոր մարզիչ Ատոմ էլիզբարյանի հորեղբորորդու) սանն է: 2019 թվականին, 14 տարեկանում նա դարձել է դպրոցականների Եվրոպայի չեմպիոն, իսկ 2021 թվականին՝ մայրցամաքի առաջնության արծաթե մեդալակիր:

Հպարտությամբ նշենք, որ արդեն Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում, 51 կգ քաշային կարգում, Գոռը կիսաեզրափակիչ փուլում պարտության մատնեց ադրբեջանցի, իսկ եզրափակչում՝ ալբանացի մարզիկին՝ նվաճելով Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը: Կեցցե'ս, Գոռ, շնորհավորում ենք:

Վրաստանի հավաքականի ակտիվում երկրորդ ոսկե մեդալը 63,5 կգ քաշային կարգում նվաճեց Դեմուր Քաջաիան: 75 կգ քաշային կարգում Բեքա Բուքիան արժանացավ արծաթե մեդալի: Մրցանակային պատվանդանի երրորդ հորիզոնականը զբաղեցրին Գոչա Գորդուլավան (60 կգ), Սաբա Կվինիկաձեն (75 կգ): Աղջիկների մրցաշարում բրոնզե մեդալ շահեց Թամար Սամելիան (48 կգ):

Հաջող հանդես եկան նաեւ Հայաստանի բռնցքամարտիկները: Էրիկ Իսրայելյանը 60 կգ քաշային կարգում մրցաշարի շրջանակներում անցկացրած հինգ մենամարտերից երեքն ավարտեց նոկաուտով, ընդ որում՝ առաջնության եզրափակչում պարտության մատնեց տանտերերի ներկայացուցիչ, բուլղարացի բռնցքամարտիկին եւ նվաճեց մայրցամաքի ուժեղագույնի կոչումը: 67 կգ քաշային կարգում հայաստանցի Արես Հակոբյանը նվաճեց արծաթե մեդալ:

ԵՎՐԱՏԵՍԻԼ - 2022

ԵՐԳԻ ՓԱՌԱՏՈՆՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԸ ԿՆԵՐԿԱՅԱՑՆԻ «ՑԻՐԿՈՒՍ ՄԻՐԿՈՒՍ» ԽՈՒՄԲԸ, ԻՍԿ ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՌՈԶԱ ԼԻՆԻՆ

2022 թվականի «Եվրատեսիլ» երգի փառատոնը կանցկացվի Իտալիայի Թուրին քաղաքում, «ՊալաՕլիմպիկո» մարզահամերգային համալիրում՝ մայիսի 10-ին եւ 12-ին, իսկ եզրափակիչը՝ մայիսի 14-ին:

Փառատոնին մասնակից 41 երկրների թվում են Վրաստանն ու Հայաստանը: Վրաստանը ներկայացնում է «Ցիրկուս Միրկուս» խումբը՝ «Lock Me In» երգով, իսկ Հայաստանը՝ Ռոզա Լինին «Snap» երգի կատարմամբ:

Նշենք, որ «Եվրատեսիլ-2022» փառատոնի մասնակիցների թվում է էստոնիան ներկայացնող հայազգի երգիչ, էստոնիայի Տարտու քաղաքի Mashtots Tartu-Tallinn հայկական կիրակնօրյա դպրոցի շրջանավարտ, «Դվին» քառյակի երգիչ Ստեֆան Այրապետյանը:



ԽԱՉԲԱՌ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 6.Տխիլ: 8.«Քաղցր» ավան Վրաստանում: 10.Օրգանիզմը խթանող ազդեցություն ունեցող ըմպելիք: 11.Միապետների նախկին անվանումը մի շարք երկրներում: 13.Ստեղծագործող արվեստագետ հին եւ միջնադարյան Հայաստանում: 14.Մարզահագուստ արտադրող ընկերություն: 16.Կավե սափոր: 17.Սլավոնական ժողովուրդ: 19.Տղմուտ վայր: 21.Վրաստանում քրիստոնեություն քարոզող սուրբ: 22.Հայ արքա Հայկազունիների տոհմից: 23.Գիշատիչ կենդանի: 27.Օգտակար հանածո: 29.Քաղաք Հայաստանում: 32.Դիցուհի Սկանդինավյան առասպելաբանությունում: 33.Քաղաք Իտալիայում: 35.Եվրոպոիդ, մոնղոլոիդ: 36.Հացահատիկ: 37.Երաժշտական գործիք: 39.Նախկին: 42.Քաթան: 44.Երիտասարդ: 46.Անասնակեր: 49.Լուսատու սարք: 50.Երաժշտական հնչյունի պայմանական գրային նշան, ձայնանիշ: 53.Ֆրանսիացի երգչուհի Պատրիսիա ...: 54.Խոսքի մաս: 55.Գետ Ֆրանսիայում: 56.Մազ սանրելու հարմարանք: 57.Բնական շինանյութ: 58.Գետ Հարավ-Արեւելյան Ասիայում: 59.Միամյա բույս: 60.Անասունների ամբողջական մորթուց պատրաստված պարկ: 61.Գործողություն, որ կատարվում է հաճույքի համար:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ունակ, կարող: 2.Դյուրաթեք: 3.Լիլիպուտ: 4.Մանրահատիկ ապար: 5.Արտասովոր: 7.Ուսի վրա ամրացվող տարբերանշան: 9.Որպես հարցական՝ արտահայտում է հարցում գործողության ուղղվածության մասին: 12.Բանական, խոսող: 15.Հայ բանաստեղծ Պետրոս ...: 18.Բանջարեղեն: 20.Արեւելյան քաղցրավենիք: 24.Բերանացի: 25.Տանտիրուհու գործերից: 26.Մեծ մուրճ: 28.Հայկական տոմարի ամիս: 30....-փառոք: 31.Ժողովրդական զրույց, որի հիմքում ընկած է իրական դեպք: 33.Կավագործ: 34.Պտտվում է իր առանցքի շուրջ: 38.Ետ (հակ.): 40.Ֆրանսիացի բանաստեղծ ... դը Բերժերակ: 41.Հայ բանաստեղծ, արձակագիր Գուրգեն ...: 42.Իգական սեռի ներկայացուցիչ: 43.Ռադիոալիքների հաղորդման եւ ընդունման սարք: 45.Շալվար: 47.Վրացի գրող եւ պատմաբան ... Մորչիլաձե: 48.Կիտուկ, դիզակ: 51.Թշնամի, հակառակորդ: 52.Գիշատիչ թռչուն:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Սոմալի: 4.Հարյուր: 9.Ռանդա: 10.Բրուտ: 11.Դիլան: 13.Վանա: 14.Եռուն: 17.Աթա: 18.Լելո: 19.Յուտա: 22.Պիրկ: 23.Մուրադ: 27.Բեմ: 31.Երե: 32.Վայրագ: 34.Բյուրական: 35.Սերբ: 39.Պոզ: 40.Աբել: 42.Ակակի: 44.Սանա: 45.Սույն: 46.Ուր: 48.Աքրա: 49.Սիսեռ: 51.Ուսադիր:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Սաղաթել: 2.Մառնեուլի: 3.Լենա: 5.Ռաբունի: 6.Ուրուգվայ: 7.Գանձա: 8.Դավիթ: 11.Դափ: 12.Լազուր: 15.Ռեպ: 16.Նորայր: 20.Ուզբեկ: 21.Արմեն: 24.Ալ: 25.Թավադ: 26.Այգաբաց: 28.Երամակ: 29.Այցելուն: 30.Տրական: 33.Յասոն: 36.Եզակի: 38.Ջիվանի: 39.Պար: 41.Ես: 43.Արքա: 44.Սուրբ: 47.Առու: 49.Սի: 50.Մի:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀՅՈՒՍՈՒՍԱՅԻՆ ՀԱՍՑԵ՝ ԹԲԻԼԻՍԻ 0105, Գ.ԱԹՈՆԵԼԻՆ ՓՈՂՈՑ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ՏԵԼ. ՀԵՌ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ՎՐԱՍՏԱՆ»
ԹԲԻԼԻՍԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445